

Մեկնարկեց Գյուղական համայնքների առաջին համաժողովը

10-ը հոկտեմբերի, 2011 թ.

http://mta.gov.am/hy/news/item/2011/10/10/news_1050/



Այսօր Ջերմուկում իր աշխատանքները սկսեց Գյուղական համայնքների առաջին համաժողովը: Երկօրյա համաժողովն անց է կացվում ՏԻՄ 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում եւ նպատակ ունի աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը՝ երկխոսության, փորձի, իրականացվող ծրագրերի եւ քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով:

Համաժողովի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Համաժողովն իր աշխատանքները կավարտի վաղը, որի փակման հանդիսավոր արարողությանը ներկա կլինի ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Համաժողովին մասնակցում են տեղական ինքնակառավարման եւ տարածքային կառավարման, պատասխանատու պետական կառավարման մարմինների, մարզերում եւ համայնքներում տարբեր ծրագրեր իրականացնող միջազգային եւ

տեղական կազմակերպությունների ավելի քան 300 ներկայացուցիչներ, փորձագետներ:

Համաժողովի շրջանակում կանցկացվի երկու լիազուրկ նիստ, կազմակերպվել է ցուցահանդես՝ նվիրված հանրապետության մարզերում եւ համայնքներում անցած 20 տարիներին ծրագրեր իրականացրած միջազգային կազմակերպությունների գործունեության արդյունքներին ու ձեռքբերումներին:

Երկու օրերի ընթացքում քննարկումներ կլինեն 10 աշխատանքային խմբերում հետևյալ՝ "Համայնքային ենթակառուցվածքներ՝ ջրային տնտեսություն, էներգետիկ ենթակառուցվածքներ, քաղաքաշինություն", "Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը գյուղական համայնքներում", "Գյուղատնտեսություն՝ քաղաքականություն, ծրագրեր, զարգացման տեսլականներ", "Վարչատարածքային բարեփոխումներ՝ տեղական ինքնակառավարման հիմնախնդիրները", "Բնապահպանություն եւ հանքարդյունաբերություն", "Համայնքային ենթակառուցվածքներ՝ սոցիալական եւ առողջապահական ոլորտներ (քաղաքականություն, ծրագրեր, զարգացման տեսլականներ)", "Զբոսաշրջության զարգացման հնարավորությունները գյուղական միջավայրում", "Մշակույթն ու կրթությունը գյուղական համայնքներում՝ (քաղաքականություն, ծրագրեր, զարգացման տեսլականներ)", "Բանկային համակարգ՝ վարկային գործիքները գյուղական համայնքներում", "Նոր տեխնոլոգիաներ" թեմաներով: Նշված աշխատանքային խմբերում ՏԻ մարմինների եւ պետական ու շահագրգիռ այլ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ կքննարկվեն գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրները, կներկայացվի նույնատիպ հարցերի լուծման միջազգային դրական փորձը:

Ակնկալվում է, որ համաժողովը կունենա գործնական արդյունքներ, կնախանշվեն շատ հարցերի լուծումներ, նոր ծրագրերի իրականացման հնարավորություններ: Համաժողովը կազմակերպվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության եւ Հայաստանի համայնքների միության կողմից:

ՏԿՆ հասարակայնության հետ կապերի բաժին

Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով մեկնել է Վայոց ձորի մարզ

10-ը հոկտեմբերի, 2011 թ.

<http://www.president.am/hy/press-release/item/2011/10/10/news-1846/>

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր աշխատանքային այցով մեկնել է Վայոց ձորի մարզ՝ մասնակցելու Ջերմուկում անցկացվող գյուղական համայնքների առաջին

համաժողովին, որն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում և նպատակ ունի աջակցել գյուղական համայնքների զարգացմանը:



Նախագահը շնորհավորել է համաժողովի մասնակիցներին ՏԻՄ 15-ամյակի առթիվ, ողջունել համաժողովի անցկացումը, որը, Հանրապետության ղեկավարի խոսքով, թույլ է տալիս ուշադրությունը կենտրոնացնել գյուղի և նրա հիմնախնդիրների վրա, համատեղ քննարկել առկա հարցերը: Մերժ Սարգսյանն ընդգծել է, որ պետության համար շարունակում է առաջնային մնալ տարածքների համաչափ զարգացման ապահովումը: Այդ նպատակով մշակվել է ՀՀ տարածքների զարգացման հայեցակարգը, որը թույլ է տալու այս կամ այն ծրագրի իրականացումը դիտարկել տարածքների համաչափ զարգացման տեսանկյունից: Նախագահի խոսքով, համաչափ զարգացումը բազմաթիվ այլ ուղղությունների շարքում ենթադրում է նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների և արդյունավետ գյուղատնտեսության զարգացում: «Ուզում եմ մեկ անգամ ևս շեշտել, որ այս տարի մեր պետության և ժողովրդի համար շատ կարևոր հոբելյաններ ենք նշում: Մեր անկախության 20-ամյակի տարում լրանում են նաև պետության կարևորագույն ինստիտուտների հոբելյանները, և դրանց թվում ցանկանում եմ առանձնացնել մեր տեղական ինքնակառավարման համակարգի 15-ամյա հոբելյանը: Կարծում եմ, իր նշանակությամբ այն մեր պետության ամենակարևոր հաստատություններից մեկն է:

Կայացած տեղական ինքնակառավարման համակարգը ենթադրում է ամուր ու զարգացած համայնք և հետևապես՝ բարեկեցիկ գյուղ», -ասել է Նախագահ Սարգսյանը:

Հանրապետության ղեկավարի խոսքով, վերջին տարիներին, հատկապես ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ, նկատելի աշխատանքեր են կատարվել: Իրականացվել են ճանապարհաշինական և ոռոգման ենթակառուցվածքների վերականգնման բազմաթիվ ծրագրեր, զգալի ջանքեր են գործադրվել գյուղական համայնքների, դրանց տնտեսական հնարավորությունների զարգացման, գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ուղղություններով: Մարզերում շարունակվում են կրթական, սոցիալական, մշակութային ոլորտներում ներդրումները, կառուցվում և արդիականացվում են բուժհաստատություններ՝ ավելացնելով որակյալ բուժօժանոթություններ ստանալու հնարավորությունները:

Նշելով, որ այդ աշխատանքների ֆինանսավորման աղբյուրները տարբեր են՝ դրամաշնորհներ, վարկային միջոցներ, պետության սեփական եկամուտներ, Սերժ Սարգսյանը կարևոր է համարել, որ նշված միջոցներն օգտագործելիս հնարավորինս հաշվի է առնվել հենց շահառուների, տեղական ինքնակառավարման մարմինների կարծիքը:

«Այդպիսի լավագույն օրինակներից մեկը «Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի» ծրագրերի իրականացման աշխատանքն էր, երբ ծրագրի բոլոր բաղադրիչների մասով մենք խորհրդակցեցինք մեր բնակչության հետ և կարողացանք ոչ միայն սահմանել առաջնահերթ լուծում պահանջող ամենից կարևոր խնդիրները, այլ նաև հասարակական աջակցություն ապահովել, ինչը նաև օգնեց ծրագրի ոռոգման բաղադրիչը մինչև վերջ իրականացնել: Դա, բնականաբար, իր մեջ նաև հսկողական մեխանիզմներ է պարունակում, և պատահական չէ, որ Միացյալ Նահանգների այդ հիմնադրամի ղեկավարության կարծիքով, Հայաստանում իրականացված ծրագիրը ճանաչվել է լավագույններից մեկը: Ես փոքր-ինչ համեստորեն եմ ասում, որովհետև վերջերս մեզ մոտ էր Հիմնադրամի ծրագրերի իրականացման հարցերով փոխնախագահը, ով ասաց, որ հայաստանյան ծրագիրն աշխարհում «Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի» իրականացրած լավագույն ծրագիրն է», - համաժողովի մասնակիցներին ուղղված իր ողջույնի խոսքում նշել է Նախագահը:

Երկրի ղեկավարի խոսքով, հանրապետական նշանակություն ունեցող ծրագրերը, որոնք հիմնականում իրականացվում են նախարարությունների միջոցով, ևս մշակվում և իրականացվում են՝ խորհրդակցելով ՏԻՄ-երի, մարզպետների և այլ շահագրգիռ կողմերի հետ: «Դրանից զատ, մենք նաև միջոցներ ենք հատկացնում, որպեսզի հենց տեղում մարզպետները և տեղական ինքնակառավարման մարմինները՝ խորհրդակցելով բնակչության հետ, իրականացնեն իրենց

առաջնահերթ ծրագրերը: Եվ միայն այս տարի, գիտեք, որ այդ ծրագրերի համար բյուջեից հատկացրել ենք 20 մլրդ դրամ, որպեսզի կարողանանք լուծում տալ այն հրատապ խնդիրներին, որոնք եղել են, կան և տեսանելի ապագայում կլինեն մեր համայնքներում: Այդ ծրագրերի շահառուները 347 գյուղական համայնքներն են, և առաջին հերթին միջոցներն ուղղվում են հենց ենթակառուցվածքների բարելավմանը:

Մեզ համար առաջնային են նաև արդյունավետ գյուղատնտեսության խնդիրները, որոնց լուծումը նպաստելու է գյուղական տարածքների զարգացմանը: Մեր որդեգրած քաղաքականության հիմքում բարեկեցիկ գյուղ, բարեկեցիկ համայնք ունենալն է՝ նրա բնակչի համար անհրաժեշտ սոցիալական և արտադրական ենթակառուցվածքներով: Մեր հետագա քայլերը ևս ծառայելու են այդ նպատակին: Այսօր կարող ենք արձանագրել, որ տեղական ինքնակառավարման համակարգի հիմքում գործուն մեխանիզմներ են դրված, և հետագա աշխատանքները պետք է ուղղված լինեն դրանց արդյունավետության, տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության բարձրացմանը:

Վերջին տարիներին աշխատանքներ են իրականացվել ֆինանսական համահարթեցման մեխանիզմների կատարելագործման առումով, տեղական ինքնակառավարման մարմիններն ավելի մեծ պատասխանատվությամբ են վերաբերվում սեփական եկամուտների հավաքագրմանը, թեկուզ փոքր ծավալով, բայց տեղերում սեփական միջոցներով առաջնային ծրագրեր են իրականացվում: Համայնքները վերջին տարիներին հրաժարվել են պարտքեր կուտակելու, այսպես ասած, «ավանդույթից»: Հիշում եք, որ ոչ հեռավոր անցյալում, նույնիսկ՝ 4-5 տարի առաջ, համայնքները կուտակում էին հսկայական պարտքեր, այնուհետև մենք ստիպված էինք լինում արդեն 3-4 տարվա ուշացումով այդ պարտքերը մարել: Իմ խորին համոզմամբ, դրանք միջոցների փոշիացում էին, ինչը մենք կարողացանք հաղթահարել և ինչի համար մարզպետներին, գյուղապետներին և, իհարկե, Տարածքային կառավարման նախարարությանը, անձամբ՝ փոխվարչապետին իմ շնորհակալությունն եմ հայտնում: Սա, իհարկե, առաջընթաց է, բայց մեր նպատակն է ունենալ առավել կենսունակ, խոշոր ու ֆինանսապես կայուն համայնքներ, տեղական մակարդակում թափանցիկ և արդար կառավարում, հասնել նրան, որ բնակչությունն իր կենսագործունեության համար առաջնային խնդիրները կարողանա լուծել հենց տեղերում՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցաբար», - ասել է Հանրապետության ղեկավարը:

Մերժ Սարգսյանը հայտարարել է, որ պետությունը մշտապես սատար է կանգնելու ՏԻՄ-երին, բարձրացնելու է տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարությունը՝ համոզվածություն հայտնելով, որ ՏԻՄ-երի ներկայացուցիչները ևս տրամադրված են վճռական և ելնելով իրենց բնակավայրի, գյուղի, համայնքի շահերից, կարողանալու են բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների հեղինակությունն ու համայնքի ղեկավարի դերը: «Այդ ամենին հասնելու համար մեզ ժամանակ է պետք, պետք է երկար ճանապարհ անցնենք: Բայց ամենից կարևորն այն է, որ մենք ընթանում ենք ճիշտ ճանապարհով,

և ես վստահ եմ՝ բոլորս կամք ունենք ու հասնելու ենք մեր նպատակին», - ընդգծել է Նախագահ Սարգսյանը:

Ջերմուկում Սերժ Սարգսյանն այցելել է նաև համաժողովի շրջանակներում կազմակերպված ցուցահանդես՝ նվիրված Հանրապետության մարզերում և համայնքներում անցած 20 տարիներին ծրագրեր իրականացրած միջազգային կազմակերպությունների գործունեության արդյունքներին ու ձեռքբերումներին: Համաժողովից հետո Նախագահը ծանոթացել է Ջերմուկի զարգացման ծրագրի շրջանակում իրականացվող հյուրանոցային նոր համալիրի շինարարության ընթացքին: Շինարարությունն սկսվել է 2009թ. և նախատեսվում է ավարտել 2013 թվականին:

Երեկոյան հանրապետության ղեկավարը շրջայց է կկատարել Ջերմուկում, ծանոթացել է քաղաքային համայնքի գիշերային լուսավորության ցանցի հիմնանորոգման ուղղությամբ կատարված աշխատանքներին, որոնք իրականացվում են Ջերմուկի սոցիալ-տնտեսական զարգացման աջակցության հիմնադրամից հատկացված միջոցների հաշվին:

ՀՀ Նախագահի մամուլի գրասենյակ

Տիգրան Սարգսյան. Պետք է մտածենք ոչ միայն գյուղատնտեսության, այլև գյուղի զարգացման մասին

11-ր հոկտեմբերի, 2011թ.

<http://www.gov.am/am/news/item/9122/>

Վարչապետ Տիգրան Սարգսյանն այսօր Ջերմուկում մասնակցել է Գյուղական համայնքների առաջին համաժողովին, որը կազմակերպվել էր Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում: Տիգրան Սարգսյանը նշել է, որ համայնքների ղեկավարների կողմից համաժողովը դրական արձագանք է ստացել և առաջարկվել է, որպեսզի այն դառնա ավանդական: «Մա խիստ օգտակար կլինի, ինչպես կառավարության, այնպես էլ համայնքների ղեկավարների համար: Համաժողովի ընթացքում տեղի ունեցած քննարկումներն ու կարծիքների փոխանակումը հնարավորություն է տալիս արձանագրել ու տեսնել, թե համայնքների ներկայացուցիչների համար ինչպիսի հարցերն են այսօր առաջնային: Կառավարությունը նախանշել է, որ տարածքային համաչափ զարգացումը Հայաստանի համար խիստ արդիական է և այս խնդիրն անհրաժեշտ է լուծել: Տնտեսական կարողությունների գերկենտրոնացումը Երևանում խոչնդոտում է ինչպես քաղաքի, այնպես էլ մեր մյուս տարածքների համաչափ զարգացմանը: Այս ոլորտում կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումները բարենպաստ պայմաններ են ստեղծելու համայնքների զարգացման համար»:

Վարչապետը նշել է, որ կառավարությունը հաստատել է գյուղատնտեսության զարգացման համալիր ծրագիր, որում 10 տարվա կտրվածքով նախանշվել են այն խնդիրները, որոնք ծառայած են ոլորտի զարգացման առջև:



«Այսուհետ մենք խոսելու ենք գյուղի և գյուղատնտեսության զարգացման մասին, այլ ոչ թե միայն վերջինիս վերաբերյալ: Մա պայմանավորված է նրանով, որ ժամանակակից աշխարհում գյուղատնտեսության զարգացումն ուղեկցվում է արդյունավետության կտրուկ բարձրացմամբ. բարձրանում է արտադրողականությունը, ձևավորվում են նոր միավորումներ, կոոպերատիվներ, խոշոր տնտեսություններ: Հաշվի առնելով նաև ժամանակակից տեխնիկայի կիրառումը՝ հասկանալի է դառնում, որ մեծածավալ աշխատուժի կարիքը գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավելու առումով գնալով նվազում է: Այս խնդիրը դառնում է մեզ համար կարևորագույնը և դա նշանակում է, որ մենք պետք է մտածենք ոչ միայն գյուղատնտեսության զարգացման, այլև գյուղում նոր աշխատատեղերի, պայմանների ստեղծման մասին, որոնք համադրելի կլինեն քաղաքային պայմաններին և չեն ստիպի գյուղացուն տեղափոխվել քաղաք ու այնտեղ որոնել աշխատանք», - ասել է Տիգրան Սարգսյանը՝ ավելացնելով, որ կառավարությունը շատ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնի գյուղական վայրերում ծառայությունների մատուցման ու ենթակառուցվածքների զարգացման վրա:

Գործադիրի ղեկավարը տեղեկացրել է, որ այս տարի բավականին մեծ աճ է արձանագրվել գյուղատնտեսության բնագավառում, որը պայմանավորված է նաև բարենպաստ

բնակլիմայական պայմաններով: «Բայց և այնպես, ոլորտի զարգացմանը նպաստել են նաև իրականացված աննախադեպ ծավալով ներդրումները՝ ուղղված սերմնաբուծության զարգացմանը, գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորմանը և մասնավոր ներդրումների ծավալների մեծացմանը: Գյուղատնտեսության զարգացման մյուս ուղղությամբ պետությունն օժանդակել է նաև արտադրանքի իրացման հարցում: Այն լայնածավալ ծրագրերը, որոնք իրականացրել ենք՝ տվել են իրենց արդյունքները: Ստեղծվում են խոշոր այգիներ, գյուղատնտեսական ձեռնարկություններ, որոնք մրցակցելու են փոքր ու միջին ֆերմերների հետ: Սա մոտակա երեք տարիների ընթացքում ստեղծելու է գյուղական ոլորտի զարգացման նոր միջավայր: Կառավարությունն առաջին հերթին օգնելու է փոքր և միջին տնտեսություններին»:

Համաժողովի նպատակն է գյուղական համայնքների կայուն զարգացմանն աջակցությունը ոլորտում գործող բոլոր դերակատարների երկխոսության, փորձի փոխանակման, իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով:

ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն